Կախանովի ջրանցքը կառուցվել է 1870-1874 թվականներին Անդրկովկասյան փոստային օկրուգի պետ գեներալ Ն.Ն.Կախանովի նախաձեռնությամբ դեռեւս հնագույն ժամանակներից գոյություն ունեցող ջրանցքի ընթացքով: 1870 թվականին Կախանովը Երասխավանի կիսաանապատները 65 տարով վարձակալեց՝ նպատակ ունենալով այնտեղ զբաղվել շաքարի ճակնդեղի մշակությամբ: 1874 թ· նոյեմբերի 5-ին շինարարությունն ավարտվեց: Ջրանցքն ունի 36 կմ երկարություն: Այն վերակառուցվել է 1930 թ·-ին:

Վիպասան Ռաֆֆին իր «Ճանապարհորդական նոթեր»-ում https://vahagnakanch.files.wordpress.com/2011/04/raffi-hushagrutyun2.pdf այդ մասին գրում է· «Դավալուից մինչեւ Սադարակ (Դահնա) այլեւս հայոց գյուղեր չկան, այլ տարածվում է մի ընդարձակ անապատ, որի միջով անցնում է Կախանովի ջրանցքը, որն երբեմն մոտենում է փոստային ճանապարհին եւ կտրում է նրան: Պատմում էին, թե այդ ջրանցքն այն օգուտը չտվեց տեղացիներին, որքան սպասվում էր. եւ դրա պատճառը մեկնում են ջրի տիրոջ շահասիրական վարմունքի մեջ մշակողների հետ, այնպես որ, յուր հաշիվը իմացող հողագործը չէր հոժարվի նրա հետ գործ ունենալ: Երկրորդ, Սադարակը սարսափելի մի տեղ է ամառվա ժամանակ, օդը լցվում է մի տեսակ մանր եւ հազիվ տեսանելի մժեղներով, որոնք խայթելով մարդու մարմնի բաց տեղերը, իրանց թունավոր ազդեցությամբ կրակի պես այրում են. նրանք արգելում են մինչեւ անգամ շնչառությունը, լցվում են մարդու բերանը, աչքերը, ականջները եւ ամեն տեղ: Ամեն մարդ փախչում է այդ սարսափելի միջատներից, որոնք խայթելով կարող են գժվացնել: Բարեբախտություն է ճամփորդի համար, եթե այստեղից անցնելու ժամանակ քամի լինի, այսպիսի եղանակում նրանք չեն երեւում: Այս բոլորից հետո Կախանովը մինչեւ այսօր մի բնակություն, մի պատսպարան չէ շինել տված յուր հողագործների համար այդ անապատում, ուր ավազակները մժեղներից թվով պակաս չեն: Իմ անցնելու ժամանակ նոր սկսել էին շինել ճանապարհի կողքին թուրքի քարվանսարայի նման մի բան, չգիտեմ ինչ նպատակով: Խոսելով Կախանովի ջրանցքի վերա, չեմ կարող չնկատել մեր հայ դրամատերերի անտարբերությունը, որոնց ոչ մեկը չէ մտածում կամ առանձին, եւ կամ ընկերություններ կազմելով, Արաքսից նոր ջրանցքներ բաց անել, եւ նրա ափերի վերա ընկած անապատ տարածությունները մշակել տալ: Հայերին ավելի կհաջողվի այս տեսակ ձեռնարկությունը, որովհետեւ տեղական հանգամանքներին ծանոթ են»: